ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Հոդվածում քննության են առնվում կատարողական վարույթի էության բացահայտման հետ կապված տեսական և գործնական մեկնաբանությունները: Մասնավորապես, քննարկման առարկա է դարձվել կատարողական վարույթը քաղաքացիական դատավարության, վարչական իրավունքի, թե՞ առանձին իրավունքի ճյուղ է: Բացահայտվել է կատարողական վարույթի տեղը և նշանակությունը իրավական համակարգի մեջ:

Հիմնաբառեր- *Դատական ակտերի հարկադիր կատարում, կատարողական վարույթ, կատարողական վարույթը որպես դատավարության ավարտական փուլ, կատարողական վարույթը որպես վարչական վարույթ, կատարողական վարույթը որպես ինքնուրույն իրավունքի ճյուղ, արդար դատաքննություն:*

Դատական ակտերի հարկադիր կատարումը կամ այլ կերպ կատարողական վարույթը հանդիսանում է անձի խախտված իրավունքների պաշտպանության երաշխիքը:

Եվրոպական դատարանը ևս անդրադարձել է կատարողական վարույթի կարևորությանը: Մասնավորապես Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով արտահայտվել է այն դիրքորոշումը, որ անձի՝ իր խախտված իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կապակցությամբ դատարան դիմելու իրավունքը հռչակագրային բնույթ կունենար, եթե Եվրոպական կոնվենցիայի անդամ երկրները չապահովեին օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումը: Այլ կերպ՝ դատական ակտերի կատարումը որպես այդպիսին, հանդիսանում է Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված արդար դատաքննության տարր[1]:

Կատարողական վարույթն ունի իր նպատակները, սուբյեկտային կազմը, օբյեկտները, բովանդակությունը, հարուցման և դադարման հիմքերը: Կատարողական վարույթն իրենից ներկայացնում է դատական, ինչպես նաև այլ մարմինների՝ անձի սուբյեկտիվ նյութական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնող ակտերի՝ օրենքով սահմանված կարգով հարկադրական իրականացումը[2]:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ ՀՀ իրավական համակարգում լայն տեղ է հատկացվում դատական ակտերի հարկադիր կատարման իրավահարաբերությունների կարգավորմանը: Մասնավորապես, կատարողական վարույթի կանոնակարգումն իրականացվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով[3], «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով[4], «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքով[5] և այլ նորմատիվ իրավական ակտերով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը ևս անդրադառնում է դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությանը, ըստ որի, դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, քննարկվող օրենքից և իրավական այլ ակտերից: Բացի այդ, սահմանվում է, որ դատական ակտերի հարկադիր կատարման հարցերով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կարգավորումներ նախատեսված լինելու դեպքերում կիրառվում են նաև այդ պայմանագրերի նորմերը:

Ավելին՝ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Ինչպես արդեն նշվեց, կատարողական վարույթն ապահովում է երկու խումբ մարմինների ակտերի հարկադիր կատարումը՝ 1. դատարանների, 2. այլ մարմինների:

Մասնավորապես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է, որ հարկադիր կատարման ենթակա են՝

1) քաղաքացիական գործերով դատական ակտերը, բացառությամբ իրավաբանական անձին կամ քաղաքացուն սնանկ ճանաչելու և մրցութային վարույթ սկսելու մասին գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատական ակտերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով նախատեսված գործերով դատական ակտերի,

2) քրեական գործերով դատարանի դատավ-

www.journal.lawinstitute.am

ճիռները և որոշումները՝ տուգանքների, գույքի բռնագրավման և գույքային բռնագանձումների մասով,

3) արբիտրաժային տրիբունալների վճիռները,

4) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում օտարերկրյա դատարանների և արբիտրաժային տրիբունալների քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները, ինչպես նաև՝ քրեական գործերով օտարերկրյա դատարանների դատավճիռներն ու որոշումները՝ վնասի հատուցման և գույքային այլ բռնագանձումների մասով,

5) Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ (մասնակցությամբ) գործող միջազգային դատարանի, ինչպես նաև միջազգային արբիտրաժի քաղաքացիական և տնտեսական գործերով վճիռները և որոշումները,

6) Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները,

7) անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

Այսպիսով, դատական ակտերի հարկադիր կատարում եզրույթը հավաքական հասկացություն է, որն իր մեջ ներառում է ոչ միայն դատական ակտերի այլ նաև այլ մարմինների համապատասխան ակտերի հարկադիր կատարումը: Այդ է վկայում նաև այն հանգամանքը, որ ոլորտը կանոնակարգող օրենքը վերնագրված է դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենք, սակայն, բացի դատական ակտերի հարկադիր կատարումից, ապահովում է նաև այլ մարմինների ակտերի հարկադիր կատարման կանոնակարգումը:

Գիտության մեջ միատեսակ մոտեցում գոյություն չունի կատարողական վարույթի էության վերաբերյալ: Մասնավորապես, բանավիճային բնույթ է կրում այն հարցը, թե՝ կատարողական վարույթը ինչ տեղ է զբաղեցնում իրավական համակարգում: Կատարողական վարույթի էության վերաբերյալ գիտական տեսակետները կարելի է բաժանել հետևյալ երեք խմբերի.

1. Մի դեպքում՝ կատարողական վարույթը համարվում է որպես դատավարության ավարտական փուլ:

2. Մյուս դեպքում՝ կատարողական վարույթը համարվում է որպես վարչական իրավունքի մաս:

3. Մեկ այլ դեպքում- կատարողական վարույթը համարվում է որպես իրավունքի ինքնուրույն ճյուղ[6]:

Կատարողական վարույթը որպես դատավարության ավարտական փուլ: Կատարողական վարույթը որպես դատավարության փուլ դիտարկելու կամ չդիտարկելու համար հիմք է ընդունվում այն փաստարկը, որ անձանց իրավունքների և օրինական շահերի դատական պաշտպանությունն ավարտվում է այդ կապակցությամբ համապատասխան դատական ակտ կայացվելուց և դրանք կյանքի կոչելուց հետո[7]:

Տեսաբանները այս մոտեցումը պաշտպանում են նաև այն հիմնավորմամբ, որ

- դատավարությունը և կատարողական վարույթը իրենց նպատակներով համընկնում են,
- դատարանը հանդիսանում է և՛ կատարողական, և՛ դատավարական իրավահարաբերությունների սուբյեկտ
- կատարողական վարույթի և դատավարության նորմերն ունեն ընդհանուր մեթոդ, առարկա և սկզբունք[8]:

Սակայն, վերը նշվածին որպես հակափաստարկ բերվում է այն, որ դատավարական իրավահարաբերություններում որպես հիմնական սուբյեկտ հանդես է գալիս դատարանը, իսկ կատարողական իրավահարաբերությունների դեպքում հիմնական սուբյեկտը, որի շուրջ ծավալվում է հարաբերությունը, դա դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունն է: Շատ հաճախ նույնիսկ դատարանը որպես սուբյեկտ չի էլ մասնակցում կատարողական իրավահարաբերություններին[9]:

Կատարողական վարույթը որպես վարչական վարույթի տեսակ: Մի շարք տեսաբաններ կատարողական իրավահարաբերությունները դիտարկում են որպես վարչական իրավահարաբերություն: Մասնավորապես, նման եզրահանգման ենք գալիս ելնելով նրանից, որ կատարողական վարույթի ընթացքում կատարողական մարմինների գործողությունները, այդ թվում նաև անգործությունը՝ ենթակա են բողոքարկման վարչական կարգով: Ավելին՝ կատարողական վարույթը որպես վարչական իրավունքի մաս է ներկայացվում նաև այն հիմնավորմամբ, որ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը հանդիսանում է հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, որի իշխանական լիազորությունները տարածվում են կատարողական վարույթի սուբյեկտների վրա[10]:

Կատարողական վարույթը որպես իրավունքի առանձին ճյուղ: Տեսական մակարդակում առանձին իրավաբան գիտնականներ բերում են փաստարկներ առ այն, որ կատարողական վարույթը հանդես է գալիս որպես իրավունքի առանձին ճյուղ, որի կարգավորման առարկան են հանդիսանում էապես իրարից տարբերվող հասարակական այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք են կազմակերպչական, կառավարչական, դատավարա-

կան, գույքային, ֆինանսական, հսկողական հարաբերությունները[11]: Այս առումով, կատարողական վարույթը մեր կարծիքով՝ որոշ առումով նմանություն է ձեռք բերում քրեակատարողական իրավունքի հետ, որը ֆունկցիոնալ առումով ևս շատ հաճախ իրավունքի համակարգում իրականացնում է այն գործառույթները, որն իրականացնում է դատական ակտերի հարկադիր կատարումը: Սակայն նշվածը չի նշանակում, որ քրեակատարողական իրավահարաբերությունները և կատարողական հարաբերություններն իրենց նպատակներով համընկնում են: Ընդհակառակը, քրեակատարողական իրավունքը ապահովում է անձին պատժելու գործառույթը, իսկ կատարողական վարույթի առաջնային նպատակը չի հանդիսանում վարույթին մասնակցող պարտապանին պատժելը[12]:

Մասնավորապես, որպես վերը նշվածի հիմնավորում, առաջ է քաշվում այն փաստարկը, որ կատարողական հարաբերությունները պետք է ուսումնասիրվեն որպես մեկ ամբողջական համակարգի տարր, որի մեջ կարող են մտնել տարատեսակ ենթահամակարգեր, իսկ այդ համակարգն էլ իր հերթին հանդիսանա ենթահամակարգ՝ այլ իրավական նորմերի համակարգի համար: Ավելին՝ կատարողական վարույթի՝ որպես ինքնուրույն իրավունքի ճյուղի դեմ բերվող հակափաստարկները, առ այն, որ կատարողական վարույթը դատավարության առանձին փուլ է, հերքվում է նաև նրանով, որ այս վարույթի ընթացքում բացի դատական ակտերից նաև հարկադրանքի միջոցով ապահովվում է այլ ակտերի կատարումը ևս[13]:

Տեսաբանների մեկ այլ խումբ էլ հիմնավորում է, որ կատարողական վարույթը հանդիսանում է դատավարական առանձին իրավունքի ճյուղ, որին բնորոշ են միաբնույթ դատավարական հարաբերություններ կարգավորելու առանձնահատկությունը[14]:

Ըստ էության, վերը նշված փաստարկները բավականաչափ քննարկվել են իրավաբանական գրականության մեջ, այդ կապակցությամբ բերվել են դեմ և կողմ դիրքորոշումներ, սակայն այդպես էլ վերջնական եզրահանգում չի կատարվել առ այն, թե կատարողական վարույթն իր էությամբ որ տիրույթում է գտնվում: Մեր կարծիքով, այս կապակցությամբ առավել հիմնավորված մոտեցում է ցույց բերել Լ.Ն. Զավադսկայան[15] նշելով, որ կատարողական վարույթը կոմպլեքս հարաբերություններ կարգավորող իրավական նորմերի ամբողջություն է, որը կարգավորում է հետևյալ իրավահարաբերությունները.

- Դատավարական իրավահարաբերություններ, որոնք ծագում են դատական ակտերի հարկադիր կատարման ընթացքում և որտեղ դատարանը հանդես է գալիս որպես իրավահարաբերության սուբյեկտ.
- Քաղաքացիաիրավական հարաբերություններ, որոնք առաջանում են այն ժամանակ, երբ դատական ակտերը կատարվում են առանց հարկադրանքի դատավարության կողմերի կամքով.
- Վարչական իրավահարաբերություններ, որտեղ իրավահարաբերության գլխավոր սուբյեկտ հանդիսանում է վարչական մարմինը, որն ապահովում է կատարողական հարաբերությունների իրագործումը:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը, կարող ենք նշել, որ կատարողական վարույթը հանդես է գալիս որպես վերը նշված տարբեր տեսությունների խառնուրդ[16]: Այլ կերպ՝ կատարողական վարույթը միևնույն նպատակին, խախտված իրավունքների պաշտպանությանն ուղղված հարկադրանքի կիրառման հնարավորությամբ ընձեռված տարատեսակ իրավահարաբերությունների ամբողջություն է, որոնք առանձին-առանձին վերցրած կարող են հանդես գալ որպես վարչական, դատավարական իրավահարաբերություններ, իսկ նշված նպատակին ծառայելիս հանդես են գալիս որպես առանձին կատարողական իրավահարաբերություններ:

---

[1] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2002թ. մայիսի 7-ի վճռի 34-րդ կետը:
[2] “Гражданский процесс: Учебник” (5-ое издание, переработанное и дополненное) (под ред. М.К. Треушникова), “Статут”, 2014, С. 372-373.
[3] Ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին: Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):
[4] Ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին: Տե՛ս ՀՀՊՏ 1998.06.15/12(45):
[5] Ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին: Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.412:
[6] Տե՛ս Воронов Е.Н. Исполнительное производство (заключительная стадия гражданского процесса): учеб. пособие. С. 8.

[7] Տե՛ս Щепалов С.В. Природа и характер правоотношений в исполнительном производстве: дис. … канд. юрид. наук. М., 2005, С. 58.
[8] Տե՛ս Шевчук П.П. Природа правоотношений в исполнительном производстве. Вестник Уральского института экономики, управления и права. N 4 (17) /2011, С. 21.
[9] Տե՛ս Кузнецов В.Ф. Система исполнительного производста (вопросы теории и практики). Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Челябинск, 2004, С. 27.
[10] Տե՛ս նույն տեղում, 112-113 էջեր:
[11] Տե՛ս Куракова Н.В. Место исполнительного производства в системе права // Арбитражный и гражданский процесс. 2004. N 11, С. 45.
[12] Տե՛ս Кузнецов В.Ф. Система исполнительного производста (вопросы теории и практики). Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Челябинск, 2004, С. 29.
[13] Տե՛ս նույն տեղում 19-24 էջեր:
[14] Տե՛ս Исаенкова О.В. Проблемы исполнительного права в гражданской юрисдикции. Саратов, 2002, С. 93, ինպես նաև Гуреев В.А., Гущин В.В. Исполнительное производство: учебник. М., 2009, С. 13–15.
[15] Տե՛ս Завадская Л.Н. Реализация судебных решений, вынесенных в порядке искового производства. Автореф. дис. ... канд. юрид. Наук. М., 1979, С. 12.
[16] Տե՛ս Шевчук П.П. Природа правоотношений в исполнительном производстве. Вестник Уральского института экономики, управления и права. N 4 (17) /2011, С. 22-23.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա) Իրավական ակտեր
1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) (ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 118)
2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1998 թ. մայիսի 5, ՀՕ-239, ՀՀՊՏ 1998.08.10/17(50):
3. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (1998թ. մայիսի 5-ին: ՀՀՊՏ 1998.06.15/12(45):
4. «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենք (2004թ. փետրվարի 18-ին: ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.412:)
5. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (1950թ. նոյեմբերի 4, ՀՀՊՏ 2002.06.05/17 (192) Հոդ.367):
6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործով 2002թ. մայիսի 7-ի վճիռ (http://hudoc.echr.coe.int/eng#{“fulltext”:[“burdov”],”languageisocode”:[“ARM”],”documentcollectionid2”:[“GRANDCHAMBER”,”CHAMBER”]}, 2016թ. սեպտեմբերի 17-ի դրությամբ):

Բ) Տեսական գրականություն
1. Воронов Е.Н. Исполнительное производство (заключительная стадия гражданского процесса): учеб. пособие. Курск, 2014, 175 стр.
2. “Гражданский процесс: Учебник” (5-е издание, переработанное и дополненное) (под ред. М. . Треушникова), “Статут”, 2014, 504 стр.
3. Гуреев В.А., Гущин В.В. Исполнительное производство: учебник. М., 2009, 352 стр.
4. Завадская Л.Н. Реализация судебных решений, вынесенных в порядке искового производства. Автореф. дис. ... канд. юрид. Наук. М., 1979, 24 стр.
5. Исаенкова О.В. Проблемы исполнительного права в гражданской юрисдикции. Саратов, 2002, 240 стр.
6. Кзнецов В.Ф. Система исполнительного производста (вопросы теории и практики). Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Челябинск, 2004, 333 стр.
7. Куракова Н.В. Место исполнительного производства в системе права // Арбитражный и гражданский процесс. 2004. N11.
8. Шевчук П.П. Природа правоотношений в исполнительном производстве. Вестник Уральского института экономики, управления и права. N 4 (17) /2011.
9. Щепалов С.В. Природа и характер правоотношений в исполнительном производстве: дис. … канд. юрид. наук. М., 2005, 197 стр.

Роберт Казарян
Соискатель Государственной академии
управления Республики Армения

РЕЗЮМЕ

Сущность исполнительного производства

В статье рассматриваются теоретические и практические толкования в связи с раскрытием сущности исполнительного производства. В частности, предметом обсуждения стал вопрос о том, является ли исполнительное производство стадией гражданского процесса, отраслью административного права или отдельной отраслью права. Раскрыты роль и значение исполнительного производства в системе права.

Ключевые слова: *принудительное исполнение судебных актов, исполнительное производство, исполнительное производство как завершающая стадия судебного производства, исполнительное производство как административное производство, исполнительное производство как самостоятельная отрасль права, справедливое судебное разбирательство.*

Robert Ghazaryan
Applicant of the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

Essence of the enforcement procedure

The article discusses theoretical and practical interpretations in regard of revealing the essence of enforcement procedure. In particular, it touches upon and discusses whether the enforcement procedure is a law branch affiliated with the civic procedure, administrative law or it is a separate branch of law and legal studies. The article reveals the role and importance of enforcement procedure in the legal system.

Keywords: *compulsory enforcement of judicial acts, enforcement procedure, enforcement procedure as the conclusive phase of judicial trial, enforcement procedure as administrative procedure, enforcement procedure as independent branch of law, fair trial.*